ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 35

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ավագանու 02.07.2021 թ.-ի N 4 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ 4 Դեմ - Ձեռնպահ -

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 02-ի N 35 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին համայնքի ղեկավարի 23.06.2021թ. թիվ 54 որոշումը և ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատելու մասին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարին մեկ ամսվա աշխատավարձի չափով պարգևատրելու մասին:
3. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող <<Մոդերն այգի>> ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 36

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌևՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23.06.2021Թ. ԹԻՎ 54 ՈՐՈՇՈՒՄԸ և ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի՝ Արտամետ համայնքի <<Շինարարական>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեծելու մասին 23.06.2021թ. թիվ 54 որոշումը :
2. Հաստատել Արտամետ համայնքի <<Շինարարական>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՌՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 հուլիսի 2021 թվականի N 37

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարին մեկ ամսվա աշխատավարձի չափով պարգևատրելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**02 հուլիսի 2021 թվականի N 38**

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՄՈԴԵՐՆ ԱՅԳԻ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների և Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.06.2021 թվականի N 139 եզրակացությունը.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող <<Մոդերն այգի >> ՍՊԸ-ին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխել՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարի կողմից ապահովել նպատակային նշանակության փոփոխությունից առաջացած տարբերության վճարների գանձումները՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝* Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՌՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

*Հավելված*

*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Արտամետ համայնքի*
*ավագանու 2021 թվականի հուլիսի 02-ի*
*N 38 որոշման*

## ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<Մոդերն այգի>> ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձ <<Մոդերն այգի>> ՍՊԸ-ին պատկանող 04-022-0115-0001 ծածկարգով 0.647277 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողից՝ 0.647277 հա հողատարածքը փոխադրել (արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողեր նպատակային նշանակության՝պահեստների):